№ 227 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 1900 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 № 227

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՑ 1901 ԹԻԱԿԱՆԻ

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳՐԻ

Խմբագրութեան և մշտական աշխատակիցների նոր կազմով.

Խմբագրութեան անդամներն են՝ պ.պ. ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ եւ ԼԷՕ։

«Մուրճ» ամսագիրն ունենալու է հետեւեալ բաժինները. 1) Վէպեր, պատմուածքներ, դրամա. 2) Բանաստեղծութիւններ. 3) Ներոլութիւններ ռուսաց եւ արտասահմանեան գրականութիւնից. 4) Քննադատութիւն եւ գրախօսութիւն. 5) Ներքին քրօնիկ. 6) Արտաքին տեսութիւն. 7) Նամակներ արտասահմանից. 8) Գիւտաւորական կեանք. 9) Տնտեսական հարցեր. 10) Գիտութեան, գեղարուեստի եւ տեխնիկայի աշխարհից. 11) Յայտարարութիւններ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ.

Ռուսաստանում տարեկան 10 ռուբլի, արտասահման՝ 30 ֆրանկ
» կէս տարվան 6 » » 18 »
» 1 ամսվան 1 » » 3 »

«Մուրճ» ամսագրին կարելի է գրվել. ԹԻՖԼԻՍՈՒՄ—խմբագրատանը (Երեւանեան հրապարակ, տուն տ. Խարազեանի)։ Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամը 10-ից—2-ը, բացի կիրակի եւ տօն օրերից։

ԿԱՑՍՐՈՒԹԵԱՆ ԱՑԼ ՏԵՂԵՐԻՑ պէտք է դիմել. Тифлисъ, редакція журнала «Мурчъ».
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ՝ Tiflis, Rédaction de la revue «Mourtch».
1—3 Հրատարակիչ եւ ժամանակաւոր խմբագիր՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Համակրելի նախաձեռնութիւն. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր լիազօր մանկավարժները. Նամակ Ալէքսանդրօպօլից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Զորեքնուկ. Սալմաստեցին պանդխտութեան մէջ։

ՀԱՄԱԿՐԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ

—

«Մշակի» ներկայ համարում մենք տպում ենք Ալէքսանդրօպօլից գրած մի թղթակցութիւն գաւառի անտեսական վիճակի բարւոքման մասին։ Ալէքսանդրօպօլի գաւառապետը, կազմելով մի քանի ժողովներ քաղաքագլխի և հմուտ անձերի հետ միասին, քննութեան է ենթարկել այն հարցը, թէ ինչ միջոցներով կարելի է բարձրացնել տեղական գիւղատնտեսութիւնը իր ներկայ ընկած դրութիւնից։ Խորհրդակցութիւնը կանգ է առել այդեղործութեան, շերամապահութեան և մեղուաբուծութեան վրա։

Յայտնելով մեր մեծ համակրութիւնը այդպիսի ժողովներ կազմելու գաղափարին և ողջունելով այն նախաձեռնութիւնը, որ վերցրել է իր վրա վարչութեան ներկայացուցիչը, անհրաժեշտ ենք համարում մեր կողմից ասել մի քանի խօսք յարուցված կարևոր հարցի մասին։

Գիւղատնտեսութեան այն ճիւղերը, որոնց մասին յիշում է թղթակիցը, արդարև կարող են աջողութիւն ունենալ Ալէքսանդրօպօլի գաւառի մի մեծագոյն մասում։ Ալէքսանդրօպօլ քաղաքում, Մեծ-Ղարաքիլիսա, Ղշլաղ, Աւդիբէգ և ուրիշ գիւղերում բուսցրած մրգատու ծառերը, որոնք տալիս են լաւ յատկութեան բալ, խնձոր, սալոր և ուրիշ մրգեր, ապացոյց են, որ այգեգործութեան զարգացման համար մեծ յարմարութիւններ ունեն գաւառի շատ տեղերը։ Բոլոր այդ տեղերում կարելի է աջողութեամբ առաջ տանել և մեղուաբուծութիւնը, որի փորձերը կան գաւառում և ներկայումս. մանաւանդ նշանաւոր են իրանց աջող կազմակերպութեամբ և արդիւնքներով այն մեղուապահական փորձերը, որ արել է գեներալ Պրօսկուրեակով։ Աւելի աննպաստ են գաւառի պայմանները շերամապահութեան զարգացման համար, բայց կը գտնվեն բաւականաչափ յարմար կէտեր և այդ ճիւղի համար՝ մանաւանդ Ախուրեանի հովտում։

Բացի յիշած ճիւղերից մենք մեր կողմից խորհուրդ կը տայինք ուշադրութիւն դարձնել ընդեղէնների և բանջարների մշակութեան վրա, որոնք մեծ աջողութեամբ կարող են բուսնել գաւառի համարեա բոլոր մասերում։ Այդ արդիւնքները կարող են ծառայել թէ իբրև կերակրանիւթ ազգաբնակութեան համար և թէ իբրև առարկայ, որ կարելի էր արտահանել ուրիշ տեղեր վաճառելու համար։ Այնպիսի բոյսեր, ինչպէս են սիսեռ, լոբի, բակլա, կաղամբ, ճակընդեղ, շաղգամ, գանազան տեսակ կանաչիներ, որոնք կարող են այդ գաւառում մեծ աջողութեամբ բուսնել, ներկայումս մշակվում են միայն քաղաքում և մի քանի գիւղերում։ Ազգաբնակութիւնը ստիպված է այդ նիւթերը գնել ուրիշ տեղերից, իսկ աւելի յաճախ նա կերակրվում է միայն ցամաք հացով, մինչդեռ այդ նիւթերից շատերը շատ անդարար են և հիւթալից։ Աչքի առաջ պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ բանջարներով և ընդեղէններով սերմած հողը բազմապատիկ անգամ աւելի արդիւնը տալիս է ինչ որ մեծ տօն։

Բնութեան տօնը տօն էր եւ Լալայի համար։ Երբէք չէի տեսել նրան այդքան քաղցր, ուրախ եւ սքանչելի։

Այնքան քաղցր, ուրախ եւ սքանչելի էր նա, որ ես ակամայ հարց տուի ինձ ու ինձ,—ինչո՞ւ ենք հարստութիւն ու կրթութիւն փընտռում աղջիկների մէջ։ Հերիք չէ՞ մեզ միայն գեղեցկութիւնը։

Հերիք չէ՞ մեզ միայն գեղեցկութիւնը,—հարցնում էի ինքս ինձ, երբ յանկարծ Լալան կռացաւ ու քաղեց ինչ որ մի ծաղիկ։

—Ի՞նչ է այդ,—հարցրի ես, նայելով նրան։

Նա կարմրեց։

—Երեքնուկ է։ Ինձ թւաց, թէ չորեքնուկ է, քաղեցի։ Բայց սխալվել էի։ Միայն երեք թերթիկ է։

—Իսկ ինչի՞ դ է պէտք չորեքնուկը,—հարցրի ես։

—Գանձ գտնելու համար,—պատասխանեց նա։

—Միայն գանձ գտնելու համար է չորեքնուկը,—հարցրի ես,—թէ՞ ուրիշ բանի էլ է պէտք։

—Կողված դռներ էլ կարող է բանալ,—պատասխանեց Լալան։

—Իսկ կողված սիրտ, չէ՞ կարող բանալ։

Պատասխան չը տուեց Լալան։

—Լսել եմ,—շարունակեցի ես,—թէ չորեքնուկը սրտեր էլ է բանում։

—Ճշմարիտ է արդեօք այդ,—հարցրեց նա։

Հարցրեց եւ, ամաչելով իր տուած հարցից, աւելի եւս կարմրեց, այնպէս կարմրեց, որ խեղճս եկաւ, թէ ինչու այդպէս ամաչեցրի նրան։

Ճանապարհը շարունակում էինք լուռ։ Լալան ուշադիր նայում էր ներքեւ, ինչ որ մտքի հետ ընկած։ Ինձ չաջողվեց մի խօսք հանել նրա բերնից, մի հայեացքի արժանանալ նրա աչքերից։ Նրա աչքերը կարծէք բեւեռված էին գետնին. նրանք կարծէս ինչ որ մի բան էին փնտռում այնտեղ։ Ցանկարծ նրանք լարված կերպով սեւեռվեցին մի կէտի վրա։ Լալան կանգ առաւ եւ նորից կռացաւ դէպի գետին։

Կռացաւ, պոկեց մի ցօղուն եւ նորից ուղղվեց։ Արեւը չողում էր, թռչունները երգում էին, ծաղիկները բուրում, բայց գեղակազմ Լալան թւում էր ինձ այդ րօպէին արեւից փայլուն, թռչնիկներից քաղցր եւ ծաղիկներից գողտրիկ։ Երեսը կարմրատակել էր։ Կուրծքը բարձր ելեւէջներ էր անում։ Երկու կաթիլներ, ինչպէս մարգարտի երկու հատիկներ, ցոլում էին նրա աչքերի խորքում։

Երկու կաթիլներ, ինչպէս մարգարտի երկու հատիկներ, ցոլում էին նրա աչքերում, եւ նա ասաց, դիմելով ինձ.

—Կարծեմ, այս անգամ գտայ չորեքնուկ։

Եւ նա ցոյց տուեց ինձ մի երեքնուկ, որի ծղօտի վրա երեք սովորական թերթիկների կողքին կար եւ մի չորրորդը, փոքրիկ ու գողտրիկ, ինչպէս փոսորակը նրա այտի վրա։ Եւ յաղթողի պանծալից հայեացքով նա դրեց իր չորեքնուկը իմ սրտի դէմ։

Ես յիշեցի մի քանի րօպէ առաջ ասած խօսքերս այն մասին, թէ չորեքնուկը բանում է եւ սրտեր, ու նայեցի Լալային։

Նա լալիս էր, եւ ես տեսայ, որ լալիս է ուրախութիւնից։ Եւ այդ աչերը, եւ այդ արցունքը, եւ այդ սէրը, որ այնպէս բուռն կերպով դուրս ժայթքեց նրա սրտից, յաղթեցին ինձ։ Ես մոռացայ եւ հարստութիւն, եւ կրթութիւն, եւ տեղնուտեղը երդուեցի, որ Լալան իմն է լինելու։

Եւ ես կատարեցի երդումս, եւ Լալան այժմ իմն է։

Մենք պսակվեցինք եւ այժմ երջանիկ ենք։ Ոչ մի փոթորիկ չէ սքօղում արեւը մեր աչքից, ոչ մի օձ չէ թունաւորում մեր դրախտը։ Ես այլ եւս չեմ երազում հարուստ ու կրթված կնոջ մասին, եւ Լալան չէ փնտռում այլ եւս չորեքնուկ՝ գանձ գտնելու համար։ Մենք ամեն բանում համաձայն ենք իրար հետ, բացի մի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԼԻԱԶՕՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ

(Նամակ Գանձակից)

—

Նորերս «Մշակի» համարներից մէկում մանրամասնաբար նկարագրված էին մեր աչքի ընկնող դպրոցական հիւմնարկութիւններից մէկում տիրապետող կարգերը, որոնք եթէ զուտ չինականից մի քիչ բարձր համարվեն ու այդ պատճառով վառեն մեծահռչակ աւանդապահ Լի-Խունգ-Զանգի ու նրա հայրենակիցների արդարացի նախանձը, այնու ամենայնիւ ոչ մի դէպքում մանկավարժական համարվել չեն կարող։

Ոչ միայն Պեստալոցցիի, այլ նոյն իսկ երջանկայիշատակ տէր-Թոդիկի ոսկորները կարող են զարմանքից ու զայրոյթից գերեզմանում

*) Բոլզարացի յայտնի ֆինանսիստ ու պետական գործիչ և մի եւ նոյն ժամանակ գրող։

կոտրներ։ Հեռուում՝ հորիզոնում կապոյտին էին տալիս Հին-Պլանինայի սարերը։ Երբ առաւօտեան արեգակը լուսաւորում էր այդ սքանչելի տեսարանը, նրա ոսկեղէն ճառագայթները գողդողում էին գետի մարմանդ մակերեւոյթի վրա կամ թանգագին քարերի անձրեւի նման՝ չաղ էին անցնում ցօղապատ խոտերի վրա։ Զով քամի էր փչում գետից։ Գետափը ծածկված էր քնքոյշ սէզով, որի մէջ խաղում էին երեքնուկի (սիրի-սիրի) ցօղուններ։ Մի տեղ լսվում էր արտոյտի սուլոցը, մի ուրիշ տեղ հընչում էր խոտի մէջ թաց կացած լորի ճռճռոցը։ Ժամանակ առ ժամանակ օդի միջով սլանում էր արագաթռիչ կոյսրը կամ ծանր թռչում էր ներկարարը։ Ծաղկող մարգագետնի նուրբ հոտը, քաղցրաբոյր, ինչպէս չունչը երիտասարդութեան, տոգորել էր մթնոլորտը։ Մեղմ, ինչպէս չչուկը սիրահարների, լսվում էր հեռուից տատրակի մեղեդին։ Ամեն ինչ կեանք էր փայլեցնում, ամեն ինչ երգում էր սիրոյ մասին։ Մերձակայ ծառի վրա քաղցրաձայն սոխակը կանչում էր իր մօտ իր ընկերուհուն։ Ուր որ հեռուում ջահել հովիւը իր սիրականի գովքն էր անում սրինգով։—Այդ քաղցր հնչիւնների եւ հմայիչ բուրմունքների տպաւորութեան տակ էի, երբ առաջին անգամ տեսայ Լալային։ Նոյն պայմաններում էի սիրում պատահել նրան, երբ գործերիս պատճառով նրանց գիւղն էի գնում։

Պատահում էի նրան, ի հարկէ, միմիայն հետը զրոյց անելու համար, որովհետեւ ապագայ կնոջս ես երեւակայում էի ոչ այլապէս, քան հարուստ եւ կրթված։

Մի օր տեսայ Լալային իրանց գիւղի մարգագետնում։ Նա դիմում էր դէպի գիւղը եւ ես գնացի նրա դէմը։ Պատահեցինք եւ սկսեցինք գնալ միասին, խօսելով։ Արեւը չողում էր, թռչունները երգում էին եւ ծաղիկները բուրմունք էին սփռում աւելի սաստիկ, քան երբ եւ իցէ։ Թւում էր, թէ ամբողջ բնութիւնը

Ղարաքիլիսա, Ղշլաղ, Աւդիբէգ և ուրիշ գիւղերում բուսցրած մրգատու ծառերը, որոնք տալիս են լաւ յատկութեան բալ, խնձոր, սալոր և ուրիշ մրգեր, ապացոյց են, որ այգեգործութեան զարգացման համար մեծ յարմարութիւններ ունեն գաւառի շատ տեղերը։ Բոլոր այդ տեղերում կարելի է աջողութեամբ առաջ տանել և մեղուաբուծութիւնը, որի փորձերը կան գաւառում և ներկայումս. մանաւանդ նշանաւոր են իրանց աջող կազմակերպութեամբ և արդիւնքներով այն մեղուապահական փորձերը, որ արել է գեներալ Պրօսկուրեակով։ Աւելի աննպաստ են գաւառի պայմանները շերամապահութեան զարգացման համար, բայց կը գտնվեն բաւականաչափ յարմար կէտեր և այդ ճիւղի համար՝ մանաւանդ Ախուրեանի հովտում։

Բացի յիշած ճիւղերից մենք մեր կողմից խորհուրդ կը տայինք ուշադրութիւն դարձնել ընդեղէնների և բանջարների մշակութեան վրա, որոնք մեծ աջողութեամբ կարող են բուսնել գաւառի համարեա բոլոր մասերում։ Այդ արդիւնքները կարող են ծառայել թէ իբրև կերակրանիւթ ազգաբնակութեան համար և թէ իբրև առարկայ, որ կարելի էր արտահանել ուրիշ տեղեր վաճառելու համար։ Այնպիսի բոյսեր, ինչպէս են սիսեռ, լոբի, բակլա, կաղամբ, ճակընդեղ, շաղգամ, գանազան տեսակ կանաչիներ, որոնք կարող են այդ գաւառում մեծ աջողութեամբ բուսնել, ներկայումս մշակվում են միայն քաղաքում և մի քանի գիւղերում։ Ազգաբնակութիւնը ստիպված է այդ նիւթերը գնել ուրիշ տեղերից, իսկ աւելի յաճախ նա կերակրվում է միայն ցամաք հացով, մինչդեռ այդ նիւթերից շատերը շատ անդարար են և հիւթալից։ Աչքի առաջ պէտք է ունենալ և այն հանգամանքը, որ բանջարներով և ընդեղէններով սերմած հողը բազմապատիկ անգամ աւելի արդիւ-

Նաւէտ է, քան հացահատիկի դաշտը։

Ալէքսանդրօպօլի գաւառում մեծ նշանակութիւն ունեն նաև անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը։ Գաւառի այն մասը, որ կոչվում է Աբարանպօլ, Փամբ, Ղարախաչ, ունի ընդարձակ արօտներ և մարգագետիններ, որոնք անյարմար են վարելու համար և բնականաբար նշանակված են անասնապահութեան զարգացման համար։ Այն գեղեցիկ փորձերը, որոնք կատարվել են Հարևան Բօրչալուի և Ախալքալաքի գաւառներում, ապացոյց կարող են լինել, որ անասնապահութիւնը և կաթնատնտեսութիւնը կարող են մեծ զարգացում ստանալ Ալէքսանդրօպօլի գաւառում։

Շատ ցանկալի է, որ յարուցված հարցը անմիջական ընթացք ստանար և սկիզբ դնէր մի այնպիսի համակրելի գործի, որ վերաբերում է ոչ միայն Ալէքսանդրօպօլի գաւառի, այլ և նրան սահմանակից միւս գաւառների տնտեսական վիճակի բարւոքման խնդրին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՈՐԵՔՆՈՒԿ

(Գեղջվի *)

—

Աշխարհս ծեր է, իսկ ես ջահել էի։ Մարդիկ ասում էին, թէ սիրտս է ինձ ամուսնացնելու՝ առանց հարցնելու գլխիս, բայց ես չէի հաւատում նրանց։ Ես ջահել էի, իսկ աշխարհը՝ ծեր։

Ես ջահել էի, ուսեալ եւ աղքատ։ Ուստի եւ երազում էի ունենալ հարուստ ու կրթված կին։

Հարուստ եւ կրթված էի երեւակայում ես երազանքներիս մէջ ապագայ կնոջս։ Բայց այդ երազանքներիս միջոցին էլ աչքերս տեսնում էին միշտ իրանց առաջեւ ածուխի պէս սեւորակ աչեր եւ բալի պէս կաս-կարմիր շրթունք եւ—այդ շրթունքների կողքին—երկու փոսիկներ, որոնք ուրախ-ուրախ թրթռում էին, երբ ժպտում էր բերանը, եւ չքանում՝ երբ նա փակվում էր որ եւ է վշտից։

Այդ աչերը եւ այդ շրթունքները պատկանում էին մի քաղցրիկ աղջկայ—սիրուն Լալային։ Հասարակ գեղջկուհի էր Լալան։ Նրա ամբողջ հարստութիւնը կայանում էր նրա գեղեցկութեան մէջ, ամբողջ կրթութիւնը՝ պարզասրտութեան մէջ։

Պարզասիրտ էր նա եւ գեղեցիկ, եւ ես սիրում էի պատահել նրան մարգագետնում իրանց գիւղի մօտ, ուր յաճախ դէպք էի ունենում լինել պարապմունքներիս շնորհիւ։

Մարգագետինը ձգվում էր գետի երկայնութեամբ։ Գետը հոսում էր անտառի մօտով։ Իսկ գետի այն երեսը, անտառից վերեւ, սփռվում էին գիւղական արտերի կանաչ գորգերը։ Տեղ տեղ նրանց մէջ սեւին էին տալիս նորավար

կոտրներ։ Հեռուում՝ հորիզոնում կապոյտին էին տալիս Հին-Պլանինայի սարերը։ Երբ առաւօտեան արեգակը լուսաւորում էր այդ սքանչելի տեսարանը, նրա ոսկեղէն ճառագայթները գողդողում էին գետի մարմանդ մակերեւոյթի վրա կամ թանգագին քարերի անձրեւի նման՝ չաղ էին անցնում ցօղապատ խոտերի վրա։ Զով քամի էր փչում գետից։ Գետափը ծածկված էր քնքոյշ սէզով, որի մէջ խաղում էին երեքնուկի (սիրի-սիրի) ցօղուններ։ Մի տեղ լսվում էր արտոյտի սուլոցը, մի ուրիշ տեղ հընչում էր խոտի մէջ թաց կացած լորի ճռճռոցը։ Ժամանակ առ ժամանակ օդի միջով սլանում էր արագաթռիչ կոյսրը կամ ծանր թռչում էր ներկարարը։ Ծաղկող մարգագետնի նուրբ հոտը, քաղցրաբոյր, ինչպէս չունչը երիտասարդութեան, տոգորել էր մթնոլորտը։ Մեղմ, ինչպէս չչուկը սիրահարների, լսվում էր հեռուից տատրակի մեղեդին։ Ամեն ինչ կեանք էր փայլեցնում, ամեն ինչ երգում էր սիրոյ մասին։ Մերձակայ ծառի վրա քաղցրաձայն սոխակը կանչում էր իր մօտ իր ընկերուհուն։ Ուր որ հեռուում ջահել հովիւը իր սիրականի գովքն էր անում սրինգով։—Այդ քաղցր հնչիւնների եւ հմայիչ բուրմունքների տպաւորութեան տակ էի, երբ առաջին անգամ տեսայ Լալային։ Նոյն պայմաններում էի սիրում պատահել նրան, երբ գործերիս պատճառով նրանց գիւղն էի գնում։

Պատահում էի նրան, ի հարկէ, միմիայն հետը զրոյց անելու համար, որովհետեւ ապագայ կնոջս ես երեւակայում էի ոչ այլապէս, քան հարուստ եւ կրթված։

Մի օր տեսայ Լալային իրանց գիւղի մարգագետնում։ Նա դիմում էր դէպի գիւղը եւ ես գնացի նրա դէմը։ Պատահեցինք եւ սկսեցինք գնալ միասին, խօսելով։ Արեւը չողում էր, թռչունները երգում էին եւ ծաղիկները բուրմունք էին սփռում աւելի սաստիկ, քան երբ եւ իցէ։ Թւում էր, թէ ամբողջ բնութիւնը

չարժվել, եթէ մի որ եւ է հրաչքով նա լսէ, որ կայ զպրոցական հիմնարկութիւն, որտեղ աշակերտներից գրաւոր կարծիքներ են հաւաքում իրանց ուսուցիչների մասին ու վերջինները վիճակի որոշումը տալիս նրանց ձեռքը, որտեղ այդ ուսուցիչները այնքան ցած են ընկած իրանց կոչման բարձրութիւնից, այնքան անձեռնհաս են, անգոյն, կամազուրկ եւ անհեղինակ իրանց սաների աչքում, որ հասնում են բանը զպրոցական այդպիսի մի այլանդակ անիշխանութեան, որտեղ չնորհիւ զպրոցի գլխաւոր ղեկավարի մանկավարժութեան հետ ոչ մի կապ չունեցող միահեծան քմահաճոյքների՝ բացակայում է ներքին կարգապահութիւնը, դիսցիպլինան, առանց որի զպրոցը նման է ջրից զուրկ ջրաղացի, ինչպէս սաում է ժամանակից մանկավարժութեան նախահայր Եան Կոմենսկի, որտեղ այդ դիսցիպլինան պահպանելու համար գործ են դնում ոչ թէ բարոյական, մարդասէր միջոցներ, ղեկավարի ու դաստիարակների անձնական բարի օրինակը, նրանց բարոյական հեղինակութիւնը եւ բարձր մարդկային արժանաւորութիւնները, ինչպէս պահանջում է այդ մանկավարժութիւնը յանձին իր ամենաարժանաւոր ներկայացուցիչների, այլ այնպիսի միջոցներ, որոնց սիրահարների թւում, ի միջի այլոց, հաշւում են հռչակաւոր Լեյոլան եւ Գոգոլի ոչ պակաս հռչակաւոր Դերժիմորդան...

Ի դէպ. վերջինիս հետեւորդներից մէկը, «Մշակի» աշխատակիցներից մէկի ասելով, իր փառքի գագաթնակէտին է հասել այժմ հիւսիսում գտնվող մեր մի միջնակարգ զպրոցում եւ այդ պատճառով արժանացել է տեղական բարձրապատիւ հովի առանձին հովանաւորութեան, որն անկասկած ցանկութիւն ունի, որ իր տընաբոյս հերոսը իր բնածին հայկական հանճարով եւ իր ճնշիարիկ գործունէութիւններով նսեմացնէ նոյն իսկ իր նախատիպ եւ մեծ ուսուցիչ Դերժիմորդայի յաւիտենական փառքը... Մինչեւ ներելի է աշակերտին այդպէս գիտակցաբար երախտամոռ դարձնել դէպի իր վարդապետը։ Բարձրապատիւ հովին ի սրտէ խորհուրդ ենք տալիս բանն այդ ծայրայեղութեան չը հասցնել...

Իւրաքանչիւր փոքր ի չատէ կանոնաւոր զպրոցում, որտեղ ղեկավարվում են որոշ կանոնադրութեամբ, եւ ոչ թէ զանազան թերուս ու ինքնավստահ լիազօրների միահեծան քմահաճութիւններով, գոյութիւն ունի մանկավարժական խորհուրդ սատ մարմինը, որը կարգադրում եւ լուծում է զպրոցի կրթական—դաստիարակչական մասին վերաբերվող բոլոր հարցերը, որոշումներ է կայացնում ձայների մեծամասնութեամբ եւ որի մէջ զպրոցի ղեկավարը նախագահում է մի ձայնի իրաւունքով. նրա ձայնը կարող է գերակշռել միմիայն ձայների հաւասարութեան դէպքում։ Շատ եւ շատ սակաւ է պատահում, գոնէ ես այդպիսի դէպք չեմ յիշում, որ խորհրդի նախագահը, օգտվելով ինչ որ լիազօրութիւններով, Զինգիսխանի դեր խաղայ, այսինքն խեղդէ խորհրդի անդամների ձայնը, թելադրէ իր միահեծան կամքը, որի դէմ ոչ ոք չը յանդգնի բողոքել։ Օրինականութեան զգայմունքը այնքան խոր արմատներ է գցել, որ նոյն իսկ լիազօր յիմարութիւնների ընդունակ ղեկավարը կամայ-ակամայ ենթարկվում է մեծամասնութեան որոշման եւ ստորագրում է արձանագրութիւնը։ Կանոնաւոր զպրոցներում մանկավարժական խորհրդից է կախված աշակերտների վիճակի որոշումը. ոչ մի առանձին անհատ, լինի նա զպրոցի ղեկավար կամ նրանից բարձր իշխանաւորը, երբէք իրան իրաւունք չէ համարում կարգադրել աշակերտի վիճակը, լուծել նրա ընդունելութեան, մի դասարանից միւսը տեղափոխման կամ արտաքսման հարցը, առանց մանկավարժական խորհրդի որոշման, որի իրաւունքը այդպիսի հարցերում թէ կանոնադրութիւններով, թէ հրահանգներով եւ թէ զպրոցական արդիւնքներով անձեռնմխելի է համարվում նոյն իսկ զպրոցական ամենաբարձր իշխանութեան կողմից։ Մանկավարժական խորհուրդների այն արձանագրութիւնները, որոնք վերաբերում են աշակերտների ընդունելութեան, տեղափոխութեան եւ արտաքսման, ուղարկվում են զպրոցական միջին կամ բարձր իշխանութեան ի տեղեկութիւն. ուստի այդ արձանագրութիւնների հաստատութեան կամ չը հաստատութեան, կայացած որոշման բեկանման մասին խօսք անգամ չէ լինում. իշխանութիւնը միմիայն տեղեկութեան է առնում մանկավարժական խորհրդի որոշումները այն հարցերի վերաբերմամբ, որոնք ենթակայ են նրա անպայման իրաւասութեան։

Այդ պայմանների մէջ աշակերտի վիճակը անհամեմատ աւելի ապահովված է, քան եթէ այդ վիճակը կախված լինէր միմիայն մի անձնաւորութիւնից։ Մանկավարժական խորհուրդը, իբրեւ հաւաքական մարմին, աւելի քիչ է ընդունակ ղեկավարվել նեղ անձնական հայացքներով, անձնական համակրութիւններով ու հակակրութիւններով, քան մի առանձին անհատ։ Խորհրդում եթէ մէկը աշակերտին մեղադրում է, միւսը պաշտպանում է եւ վերջ ի վերջոյ որոշում է կայացնվում բազմակողմանի քննադատութիւնից ու խորհրդակցութիւնից յետոյ, բան խղճի ու համոզման, ձայների մեծամասնութեամբ։ Անձնական քմահաճոյքները յաճախ զսպվում են ու նոյն իսկ խստատանում այդ պայմանների մէջ։ Դրանով պէտք է բացատրել, որ երբեմն 5—6 հարիւր աշակերտ ունեցող զպրոցի մէջ տարվայ ընթացքում նոյն իսկ մի հատ արտաքսման դէպք չէ պատահում, որ մանկավարժական տեսակէտից ամենախիստ պատիժ է համարվում ու որին մանկավարժական խորհուրդը վերաբերվում է այնպիսի զգուշութեամբ, ինչպիսի զգուշութեամբ դատարաններում վերաբերվում են մահվան դատավճիռ կայացնելուն։ Աշակերտին արտաքսել կարելի է ծայրայեղ դէպքում, երբ նրան ուղղելու համար սպառվում են բոլոր միւս մանկավարժական միջոցները, իսկ կանոնաւոր զպրոցում, ուր գործը գտնվում է միանգամայն ձեռնհաս մարդկանց ձեռքում, այդպիսի ծայրայեղ դէպքեր չատ ու չատ սակաւ են պատահում։

Ուրիշ բան է, երբ այդպիսի պատասխանատու գործը յանձնվում է զանազան մեծամիտ ու միահեծան լիազօրների, այն ժամանակ կարող է ամէն բան տակն ու վրա լինել ու ամէն տեսակի ծայրայեղութիւն պատահել... Ես չեմ յանդգնում վիճել մեծահռչակ լիազօրների չնաշխարհիկ ընդունակութիւնների դէմ ու խորին ակնածութեամբ խոնարհվում եմ նրանց առաջին, իբրեւ լուրջ մանագէտների. նրանք, իբրեւ մեծաքանքար աստուածաբաններ, կարող են հրաչքներ գործել գիտութեան այդ ճիւղում, օրինակ, երկար ու ձիգ տրակտատներ գրել, թէ ինչ կտորից ու ինչ գոյնի էր Պողոս առաքեալի քղամիդը ու այդպիսով ճոխացնել հայոց ազգատիպ գրականութիւնը. իբրեւ բաղմահրամուտ հնագէտներ, նրանք կարող են պեղումներ կատարել՝ գտնելու համար այն կենդանու սմբակները ու ականջները, որի վրա նստած Յիսուսը մուտք գործեց Դաւթի քաղաքը, բայց իբրեւ մանկավարժներ՝ նրանք պէտք է ընդ միշտ ու խստատ թօթափեն իրանց ոտների փոշին այն զպրոցների շէմքերում, որոնք այնպիսի չարաչար կերպով նահատակվում են նրանց ձեռքերում...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

—

Նոյեմբերի 28-ին

«Մշակի» 217 եւ 218 համարների առաջնորդողները, որոնք վերաբերում էին մեր գաւառական—լեռնադաշտային քաղաքների եւ նրանց գիւղական ազգաբնակութեան թշուառ եւ անմխիթար կացութեան, առիթ տուին մեզ եւս մեր կողմից մի քանի խօսք աւելացնելու։

Շիրակի գաւառում ընդհանրապէս եւ Ալէքսանդրոպոլում մասնաւորապէս ազգաբնակութեան տնտեսական դրութիւնը աւելի քան ողբալի է։— Շիրակի «առասպելական» հացաշատ ամբարները միանգամայն դատարկ են, եւ գեղջուկը մերկ, քաղցած ու անօգնական է։ Մեր աւանդական կեանքի ներքին պայմաններում կարեւոր տեղ գրաւող Ալէքսանդրոպոլ քաղաքը ընկած եւ նիւթականապէս խստատ քայքայված է. կացութիւնը վերին աստիճանի յուսահատական է եւ անմխիթար ես առաւել նրա համար՝ որ մենք այս դրութեան մէջ միանգամայն անտարբեր ենք, ծալած ձեռքերով նստած, գիտենք միայն դատն կերպով դանդաւել, որ չունենք արդիւնագործութիւն, չունենք արհեստ, գիտութիւն, գիւղատնտեսութիւն, հետեւապէս՝ կարծես ընտրեան անողոք օրէնքների ազդեցութեան ներքոյ՝ դատապարտված լինենք վերջնական կորստի եւ ոչնչացման։ Եւ քաջ գիտենալով, որ արհեստի եւ արդիւնագործութեան կենտրոնները անդառնալի կերպով նուաճում են մեր այժերը, ծծում են մեր հիւթերն եւ կենսունակութիւնը, այնու ամենայնիւ՝ մեր վիճակի բարւոքման եւ ճակատագրի անօրինութեան մեծ հոգսը կարծես «Ալլահին» լինենք յանձնած։—Չը կայ արդեօք փրկութիւն։

Այժմ ում չէ յայտնի, որ ամբողջ աշխարհը կարծես միացած, միահամուռ այժերով առաջ է մղում գիւղատնտեսութեան ազնիւ եւ գեղեցիկ գործը։ Ցուսով եւ մեծ եռանդով գործում են անհատներ, գործում են հասարակութիւններ եւ նոյն իսկ կառավարութիւններ, որոնք իրանց խնամքի եւ հոգացողութեան նիւթ դարձրած այս վսեմ առարկան, կարծես ազնիւ եւ բարի նախանձի մի պայքար են մղում միմեանց դէմ, օգնելով եւ օժանդակելով ազգաբնակութեան նրա բոլոր կարիքների մէջ։

Ուրախութեամբ կարող ենք յայտնել, որ մեր գաւառապետը մի չարք պարբերական ժողովներ հրաւիրեց յատկապէս այս կարեւոր գործի կազմակերպութեան մասին խորհրդակցելու։ Ամսիս 23-ին ժողովի մէջ գաւառապետը յարուցանելով մի չարք հետաքրքիր հարցեր, խնդրեց գործին մօտ կանգնած անձերից պատրաստել գրաւոր զեկուցագրեր, որոնք պէտք է ներկայացնվեն բարձր կառավարութեան ի պատասխան նրա յարուցած այս մեծ խնդրի։ Մեր քաղաքագլուխը, որ բնական գիտութիւնների մասնագէտ է, եւ մի քանի այլ պարոններ, որոնք տարիների փորձառութիւն ունեն ձեռք բերած, դրականապէս վիայեցին, որ մեր մէջ կարելի է զարգացնել մրգաւոր ծառերի այդիներ, չերամաբուծութիւն եւ մեղուապահութիւն։

Հասկանալի է, որ տնտեսական հարցն է, որ սատիսում է սալմաստեցուն դիմել օտարութեան, որովհետեւ հայրենիքում նա չէ կարող իր ապրուստը հայթայթել։ Սալմաստում արհեստ չը կայ. գոյութիւն ունեցողները մի քանի նահապետական, ողորմելի արհեստներ են թուրքերի ձեռքում. նոյն ողորմելի վիճակում գտնվող առեւտուրը նոյնպէս, շատ ինչին բացառութեամբ, թուրքերի եւ շրջիկ հրէաների ձեռքումն է։ Մնում է սալմաստեցիներին պարապել երկու նահապետական զբաղմունքներով, անասնապահութեամբ եւ երկրագործութեամբ։ Առաջինը, չնորհիւ լեռնաբնակ քիւրդ գրացիների, շատ սահմանափակ վիճակի մէջ է, որովհետեւ Սալմաստի լեռնային ճոխ եւ ընդարձակ արօտատեղիներում միայն քիւրդն է համարձակվում անարգիլիւ արածացնել իր ոչխարն ու տաւարը, իսկ հայերի ձեռքում այնքան քիչ մարձակվում անարգիլիւ արածացնել իր ոչխարն ու տաւարը, իսկ հայերի ձեռքում այնքան քիչ մնալու, ի միջի այլոց, Երեւան, Թիֆլիս, Բաքու, Բաթում, Փօթի, Նովոռոսիյսկ, Թէոդոսիա, Եալտա, Սեվաստոպոլ, Օդէսա, եւ ամէն տեղ մեր առաջին քայլափոխում պատահեցինք սալմաստեցիների մեծ բազմութեան։ Աւելի մեծ թւով կարելի է սալմաստեցիներ գտնել Բօստօվում եւ պակաս թւով Աստրախանում, Ցարիցինում, Վօրոնէժում. նոյն իսկ հեռաւոր Վլադիվոստոկ էլ հասել է սալմաստեցու ոտը։

Այդ բոլոր քաղաքներում սալմաստեցիները, շատ ինչին բացառութեամբ, զբաղվում են բեռնակրութեամբ, մշակութեամբ, դռնապանութեամբ եւ գիշերապահութեամբ։ Աստրախանում, Բօստօվում եւ Թիֆլիսում ոմանք Պարսկաստանի սէրզէի, նուշի եւ մրգեղէնների առեւտուր ունեն։ Մշեցու եւ վանեցու փալանն այժմ անցնում է սալմաստեցու ձեռքը։

Սալմաստեցին օտարութեան մէջ առաջին տարիներում բաւական տոկուն է։ Նրա կեանքը կարելի է տաժանակիր համարել։ Առաւօտից մինչեւ երեկոյ փալանի տակ ճնշվող սալմաստեցին մնունդ ստանում է ամենավատ կերպով. քաղաքների ամենայտեղի «աչչիխանաների» բօրչը, խաշը, ապուրը նրանց ամենալաւ կերակուրներն են, այն էլ եթէ կարողանան միշտ ձեռք բերել։ Իսկ գիշերվայ օթեւանը՝ մի տուֆ, նեղ, խոնաւ նկուղ՝ 7—8 հոգու համար։ Քնաշորերը—Սալմաստից իրանց հետ բերած մի վերմակ եւ փալասի կտոր, որոնք տարիներով կեղտի մէջ փտած ածուխի գոյն են ստացել։ Շատերին բարձի տեղ ծառայում են իրանց փալանները. սպիտակեղէնները ամիսներով առանց լուանալու են մնում. մենք ականատես եղանք, թէ ինչպէս ոմանք ծովում լողանալիս իրանք լուանում էին իրանց սպիտակեղէնները։ Այսպիսով Սալմաստի սքանչելի օդով, ջրով սնված հայը, 2—3 տարի օտարութեան մէջ մընալով, կորցնում է իր առողջութիւնը եւ աշխուժութիւնը։ Նրա ֆիզիկականի վրա աւելի մեծ չափով ճնաբակար ազդեցութիւն են գործում զինեմոլութիւնը եւ այնքան տարածված վեներական ախտերը։

Դեռ 10—12 տարեկան հասակում խմիչքին քաջ ծանօթ սալմաստեցին օտարութեան մէջ իր սէրը չէ կարում օղիից եւ մանաւանդ գինուց. ամբողջ շաբաթվայ արիւն-քրտինքով հաւաքած կօպէկները յանկարծ մի գեղեցիկ օր, 4—5 հոգի միասին հաւաքած, մի քանի ժամվայ զուարճութեան տենչանքով գինետունն են յանձնում եւ դուրս գալիս։

Իսկ վեներական ախտերը նոյնպէս անծանօթ չեն պանդուխտ սալմաստեցուն։ Հարեւանական սկզբունքով զեկավարվող Պարսկաստանի անկիրթ, տգէտ եւ չտես բնակիչը, ընկնելով ազատ Ռուսաստան, ֆանդամանքից օգտվելով, առանց վախենալու կամ ամաչելու՝ չուտով ջերմ երկրպագու է դառնում իր փալանի տակից «երեսբաց» գեղեցիկ սեռին եւ, կարճ ժամանակում վանելով իր վերջին կօպէկը, պարգեւատրվում է վեներական ախտերով, որոնք ծածուկ են պահվում, ինչ ամենից չատ սարսափելին է։

Թոքախտով էլ չատ չատերն են գերեզման իջնում։ Անցեալ տարի մէկը հազիւ կարողացաւ 3 ամիս հայրենիքում ապրել եւ գերեզման իջաւ, իսկ օտարութեան մէջ որքան չատ են թոքախտից եւ անտէրութեան պատճառով մեռնողները։

Ի վերջոյ յիշենք եւ այն, որ ոմանք, 6—7 տարի օտարութեան մէջ մնալով, մոռանում են իրանց հայրենիքը, ծնողները, ընտանիքը եւ մնալով օտարութեան մէջ, այնտեղ էլ թաղվում են։ Ամէն քաղաքում էլ այդպիսիներից չատ չատերին կարելի է գտնել։ Օրինակ, Օդէսայում ինձ ծանօթ ութ սալմաստեցիներ, «լայաղ» չանելով կրկին հայրենիք վերադառնալ, արդէն որոշել են այնտեղ ապրել մինչեւ մահ. նրանցից 4-ը այնտեղ ամուսնացել են (2-ը օտարուհիների հետ)։

Այժմ հարցնում ենք՝ սալմաստեցին օգտվում է թէ վնասվում պանդխտութիւնից։

Բաքու. Ա. Դարբինեան

Ահա գործունէութեան մի ասպարէզ, որտեղ եթէ կամենաք, եռանդի եւ արիութեան օգնութեամբ կարող էինք գործել պատրաստելու մեզ համար յուսալի ապագայ։ Հետաքրքրվենք յարուցած հարցով եւ ցոյց տանք կառավարութեանը գործելու մեր պատրաստակամութիւնը։ Խնդրենք նրա ձեռներէցութիւնը եւ օգնութիւնը, քանի որ այժմս դրա համար հանդիսանում է ամենայարմար բոլէն, որովհետեւ նախաձեռնութեան մեծ եւ դժուար գործը նա ինքն է առնում իր վրա։ Այժմ, երբ մեզ հարցնում են, երբ մեզնից պահանջում են, որ մենք ժամանիչ անենք մեր կարիքները եւ պէտքերը, օգտվենք աջող առիթից, եւ միահամուռ ոյժերով ձեռք-ձեռքի տուած, առաջ մղենք մեր ազգաբնակութեան մտաւորական վիճակի բարւոքման գործը։

Ց. Զաքարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ատրպատականի հայ հասարակութեան կողմից ստացանք հետեւեալ հեռագիրը, նոյեմբերի 26-ից. «Այսօր կատարելով հոգեհանգիստ Աստուածածին եկեղեցում ի յիշատակ վաղամեռիկ Խորէն եպիսկոպոսի, միանում ենք ազգի մեծ վշտին մեր սիրելի նախկին առաջնորդի մահվան առիթով։ Նա, ինչպէս կենդանի խօսքի անփոխարինելի քարոզիչ եւ եռանդուն գործող, լոյսի, մաքի եւ գիտութեան մի կերօն էր, որ ամբողջապէս այրվեց իր սիրած ազգի վշտերը թեթեւացնելու համար»։

—

Կառավարչական շրջաններում հարց է բարձրացրած պարտաւորեցնելու բոլոր առեւտրական-արդիւնաբերական գործատէրերին ձրիաբար բժշկելու իրանց բանուորներին։

—

«Рус. Вѣд.» լրագիրը լսել է, որ երկրագործութեան մինիստրութիւնը մտադրութիւն ունի առաջիկայ տարվանից ազատ հողերի հատատութիւններ կատարել Անդրկասպեան երկրում՝ կամենալով գիւղեր հիմնել այնտեղ այն ռուս գիւղացիների համար, որոնք ցանկութիւն ունեն գաղթելու կովկաս։

—

Արժաւիրից ստացանք հետեւեալ բազմատոմարագիր հեռագիրը. «Արմաւիրի հայերը, հոգեհանգիստ կատարելով հանգուցեալ Խորէն եպիսկոպոս Ստեփանէի համար, ձեր յարգելի լրագրի միջոցով յայտնում են իրանց խորին վիշտը մեր սուրբ եկեղեցու այդ գերազէս յարգելի հովիւի եւ ատուածային խօսքի անկեղծ, անխոնջ եւ եռանդուն քարոզչի մահվան առիթով։ Թող Ամենաբարձրեալը մխիթարէ մեզ՝ հանգուցանելով իր տաղանդաւոր մշակի հոգին եւ փոխարինէ կորուստը՝ նոր եւ նոր Ստեփանէներ շնորհելով մեզ»։

—

Պետերբուրգից հեռագրում են «Приаз. Край» լրագրին հետեւեալ մանրամասնութիւնները այն խայտառակութեան մասին, որ տեղի ունեցաւ Փոքր Թատրոնում Լիտվինի եւ Կրիլովի «Իսրայէլի որդիներ» պիէսի ներկայացման ժամանակ։ «Երէկ, Նոյեմբերի 23-ին, Փոքր Թատրոնում «Իսրայէլի որդիներ» պիէսի ներկայացման ժամանակ, տեղի ունեցաւ Թատրոնի պատմութեան մէջ երբէք չը պատահած խայտառակութիւն, որի առաջ «Տերմիդորի» ներկայացման երեկոյեան պատահածը լոկ երեխայական խաղ էր։ Թատրոնը լիքն էր։ Վարագոյրի բացվելուց առաջ տիրում էր խորին լռութիւն։ Դերասան Տինկու երեւալով, որ խաղում էր գլխաւոր դերը, խայտառակութիւնը սկսվեց։ Սուլոց, ոռնաձայներ, անասելի աղմուկ, որոնք թոյլ չէին տալիս լսելու, թէ ինչ է կատարվում բեմի վրա։ Լսվում են աղաղակներ. «Սուվորին», «Կարպով»։ Վերջինը դուրս է գալիս եւ խնդրում է թոյլ տալ, որ ներկայացումը վերջանայ։ Նրան դիմաւորում են սուլոցով եւ աղաղակով «դուրս, դուրս»։ Նետվում են բեմի վրա հոտած խնձորներ, վարունգներ, կեղտոտ կրկնակոշիկներ, հեռագիտակներ։ Մի քանի դերասաններ վիրաւորվում են։ Տինկու հետ խատերինա է պատահում. նրան տուն են տանում. նրա դերը տեղակով կարդում է ուրիշը։ Գործողութիւնը, կամ աւելի ճիշտն ասած նշանախաղը, շարունակվում է։ Հասարակութեան կողմից գրականագէտներից կազմված մի պատգամաւորութիւն է գընում բեմի ետեւը։ Մօրգօվցեվ լաց է լինում, Պոտապենկո ցնցվում է խատերինայից։ Հասարակութիւնը պահանջում է Կարպովին. նա բեմ է գալիս եւ նշանացի ցոյց է տալիս, թէ ինքը անզօր է։ Դահլիճը լցվում է ոստիկաններով։ Դրութիւնը վերին ատիճանի լարվում է։ Կանայք ուշաթափվում են։ Լսվում են աղաղակներ. «բժիշկ, ջուր, սպիրտ»։ Դուրս են տանում մի ուշաթափված օֆիցէրի։ Վերջապէս վայր են թողնում երկաթեայ վարագոյրը՝ երկիւղ կրելով հասարակութեան բեմ խուժելուց։ Դուրս գալու ժամանակ խայտառակութիւնները շարունակվում են. ահագին մեծամասնութիւնը յետ է պահանջում տոմսակների վճարը։ Հասարակութեան մէջ գերազանց թիւ կազմում են ռուսները. հրէաներ շատ քիչ են։ Սուլում էր պարտերի ամենաընտիր հասարակութիւնը»։

—

Օպերետային խումբը, որ ներկայումս տաւիս է Թիֆլիսում ներկայացումներ, ունի բաւարար անսամբլ եւ աջող խօր։ Դերակատարներից աչքի են ընկնում երգչուհիներ Լելինա, Բայիսովա եւ Դալսկայա, երգիչներից Կոչեվսկիյ, որ ունի իւժօրիստական ընդունակութիւն։

—

Թիֆլիսի քաղաքային դպրոցական մասնաժողովի առաջիկայ նիստերից մէկում քննվելու է տիկին Շիոյեանի կտակի իրագործման հարցը։ Կտակի համաձայն այն տան եկամուտից, որ տիկին Շիոյեան նուիրել է Թիֆլիս քաղաքին, պէտք է 6000 ռուբլի յատկացնվի մի ստորին արհեստագիտական ուսումնարան հիմնելու Թիֆլիսում հայ երեխաների համար կամ, եթէ այդ ծրագիրը որ եւ է պատճառով չիրագործվեց, պէտք է հայ երիտասարդներ ուղարկվին արտասահման արհեստագիտական կրթութիւն ստանալու։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, մտադրութիւն ունի Ռուսաստանի բոլոր մասնաւոր դպրոցական հաստատութիւններին տալ կառավարչական դպրոցների իրաւունքներ. մի եւ նոյն ժամանակ ենթադրվում է սաստկացնել հսկողութիւնը այդ դպրոցների վրա եւ այդ նպատակով յանձնարարել արքունական դպրոցների հմուտ ուսուցիչներին յաճախակի քննութիւններ կատարել մասնաւոր դպրոցներում։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Մի քանի տարի առաջ, նախկին գործակալ Գէորգ քահանայ Տէր-Դաւթեանի օրով, Անապա եւ Վաքերի գիւղերի հայերը հաժախօսական են կազմում՝ Յակոբ Շիոյեանին իրանց համար քահանայ ձեռնադրելու, որը մօտիկ ազգական է Թիֆլիսի թեմական առաջնորդին։ Շիոյեան ձեռնադրվում է քահանայ, սակայն իր պաշտօնատեղը չէ գնում, այլ ներկայումս քահանայութիւն է անում Թիֆլիսի Նորաշէն եկեղեցում. բայի սրանից նա դանձապահ է կօնսիստորիայի, ունի խաչ եւ կամիլավկա, իսկ Անապա եւ Վաքերի գիւղերի հայերին առաջվայ պէս հովվում են այստեղի ս. Գէորգ եկեղեցու քահանաները։ Լսում ենք, որ Էջմիածնի սինոդը չէ ուզում ձեռնադրել ուրիշ քահանայացու այս գիւղերի համար, քանի որ Շիոյեան քահանան համարվում է նրանց քահանայ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիական մամուլն եւ հասարակութիւնը կատարեալ հանգարտութեամբ եւ մինչեւ անգամ անտարբերութեամբ են վերաբերվում այն ցոյցերին, որոնք տեղի են ունենում Եւրոպայում ի պատիւ Կրիւգէրի։ Այդ անտարբերութեան առիթով «Figaro» լրագրին հեռագրում են Լօնդօնից. «Մի քանիսը համարում են այդ անտարբերութիւնը կեղծ եւ շինծու։ Ես այդ կարծիքի չեմ երկու պատճառով։ Առաջին՝ անգլիացիները, ինչպէս եւ նրանց կառավարութիւնը, վստահ են, որ ոչ ոք չի սկսի հակառակվել անգլիական հարաւ-աֆրիկական քաղաքականութեանը, եւ որպէս գործնական մարդիկ, նրանք մտածում են, թէ որքան էլ պատիւներ տան Կրիւգէրին ընդունելութիւնների ժամանակ, այնու ամենայնիւ այդ բոլոր պլատոնական ցոյցերը ոչ մի բան չեն փոխի քաղաքական դրութեան մէջ։ Երկրորդ՝ անգլիացիները չեն մոռացել, որ իրանք էլ մի ժամանակ ցոյցեր են արել Կոշուտին, Մաձինիին, Գարիբալդիին, ամենեին ուշք չը դարձնելով այն հանգամանքի վրա, թէ ինչպիսի տպաւորութիւն կը գործեն ցոյցերը Անգլիայի բարեկամ պետութիւնների վրա։ Վերջապէս նրանց շատ լաւ յայտնի է, որ կառավարութիւնը պաշտօնական տեղեկութիւն չէ տուել պետութիւններին Տրանսվալի միացման մասին, ուրեմն եւ Կրիւգէր, միջազգային իրաւունքի տեսակէտից, մնում է դեռ ես այդ հանրապետութեան նախագահ եւ իրաւունք ունի որոշ պաշտօնական ուշադրութիւն գրաւելու։

—Հարաւ-աֆրիկական պատերազմի հետեւանքներից մէկն էլ այն էր, որ նշանաւոր ֆինանսական եւ քաղաքական գործիչ Սեսիլ Բօդսի ազդեցութիւնը ընկաւ ոչ միայն հարաւային Աֆրիկայում, այլ մասամբ նաեւ Անգլիայում։ Բօդս ինքը առաջուց գուշակել էր այն ժամանակը, երբ հարաւային Աֆրիկան այլ եւս կարօտ չի լինի նրա օգնութեան եւ նախօրօք պատրաստութիւններ էր տեսնում իր ֆինանսական գործունէութիւնը փոխադրելու մի այլ տեղ։ Այս նպատակով նա յարաբերութիւններ սկսեց բելգիական դրամատէրերի հետ՝ ի նկատի ունենալով որ եւ է ձեռնարկութիւն սկսել կօնգոյում, բայց գործի հետ աւելի մօտ ծանօթանալով համոզվեց, որ բելգիական դրամատէրերից շատերը գնում են Ռուսաստան, որտեղ շատ խոշոր արդիւնագործական եւ ֆինանսական ձեռնարկութիւններ նրանց են պատկանում։ «Այն առատ դիվիդենդը, ասում է «National Zeitung», որ ստանում են բելգիացիները, հրապուրեց Բօդսին եւս փոխադրելու իր գործունէութիւնը հարաւային Աֆրիկայից դէպի հիւսիսային մեծ պետութիւնը, ուր հանքային անսպառ հարստութիւն կայ։ Բօդսի գործակալները շրջեցին Ռուսաստանի բոլոր անկիւնները, եւ Ուրալի հանքային հարստութիւնների մշակման մասնակցութիւնը Բօդսի վերջին ձեռնարկութիւնը չի լինի այդ երկրում։ Այդ ձեռնարկութեան շուրջը կը խմբվեն ուրիշ, գուցէ աւելի խոշոր, ձեռնարկութիւններ։ Ռուսաստանի ղեկավարող շրջաններում հմուտ եւ եռանդուն միլիոնատէր—գործիչի ձգտումներին վերաբերվում են ոչ առանց հաճակրանքի, եւ շատ կարելի է, որ այդ մարդը նշանաւոր դեր կը խաղայ ռուսական արդիւնագործութեան առաջադիմական զարգացման մէջ»։

—Բուսինական կառավարութիւնը այժմ բանակցութիւններ է վարում ամերիկական «Standard Oil Company» ընկերութեան հետ եւ կամենում է ծախել նրան բուսինական պետական նաւթային հողերը։ Բուխարէստի «Indépendance Roumaine» լրագիրը մեզադրում է Կարպի մինիստրութիւնը, թէ նա չէ հասկանում ոչ Բուսինիայի պետական եւ ոչ ընդհանուր եւրոպական շահերը։ «Ամբողջ Եւրոպան—ասում է լրագիրը—պայքար է մղում Ամերիկայի մրցութեան դէմ, առանձնապէս այնպիսի կենսական հարցի մէջ, որպիսին է վառելիքը։ Սեփական գումարներ դնելով գործարանների եւ հաղորդակցութեան ճանապարհների վրա, եւրոպական պետութիւնները ահ ու երկիւղով են մտածում այն վայրկեանի մասին, երբ իրանց սեփական ածխահանքերը բաւականութիւն չեն տայ ներքին պահանջին իսկ հարեւանները հնարաւորութիւն չեն ունենայ հայթայթել նրանց քարածուխի անհրաժեշտ քանակութիւնը։ Անգլիան արդէն մտածում է կրճատել քարածուխի արտահանութեան չափը, թէպէտեւ նա բոլոր եւրոպական պետութիւններից հարուստ է ածխահանքերով։ Բնական է, որ բոլորի աչքերը դարձած են այժմ այնպիսի նիւթերի վրա, որոնք կարող են քարածուխի տեղը բռնել եւ ամենից առաջ, ի հարկէ, նաւթի վրա։ Անգլիան, Գերմանիան եւ Ֆրանսիան անընդհատ մտածում են այն հանգամանքի մասին, որ միայն Ամերիկան եւ Ռուսաստանը կարող են յոյս դնել իրանց վրա այն դէպքում, երբ հարկաւոր լինի ապահովել իրանց քարածուխի անհրաժեշտ պաշարով պատերազմի ժամանակ։ Նաւթի հարցը ընդհանուր եւրոպական հարց է։ Բուսինիան, որպէս մի փոքր երկիր, որ յաճախ կարիք է զգում Եւրոպայի օգնութեան, պէտք է մտածէ այդ գործում ինչպէս իր անձնական շահերի, այնպէս էլ ընդհանուր եւրոպականի մասին։ Նա կարող է օգուտ քաղել իր աշխարհագրական դիրքից եւ իր միջոցներով մատակարարել Եւրոպային նաւթ, փոխանակ նաւթաբեր հողերը տալու Ամերիկային եւ դրանով մի նոր զէնք յանձնելու նրա ձեռքը ընդդէմ Եւրոպայի։

—Լօնդօնի վճռաբեկ ատեանում այժմ քննվում է մի հետաքրքրական դատ, որով անգլիական պետական դանձարանը հարկ է պահանջում այն ժառանգութիւնից, որ թողել է յայտնի հարուստ բարոն Հիրշ։ Պէտք է յիշել, որ 1891 թուին բարոն Հիրշ կազմեց մի բարեգործական ընկերութիւն 50 միլիոն ֆրանկ դրամագլխով՝ Ռուսաստանից Ամերիկա եւ այլ տեղեր գաղթող հրէաներին օգնելու համար։ Համարեա այդ ամբողջ գումարը տուեց ինքը բարոն Հիրշ։ 1892-ին նա նուիրեց էլի 125 միլիոն ֆրանկ, ուրեմն ընդամենը 175 միլիոն ֆրանկ։ Այս գումարից 25 միլիոն դրված է Լօնդոնի բանկը, իսկ 150 միլիոն զետեղված է զանազան պետութիւնների բանկային հաստատութիւնների մէջ։ Երբ բարոն Հիրշ մեռաւ 1896 թուին, բրիտանական գանձարանը պահանջեց, որ բարեգործական ընկերութիւնը վճարէ ժառանգութեան հարկը 175 միլիոնի ամբողջ գումարից։ Ընկերութիւնը հրաժարվեց այդ հարկը վճարելուց եւ առաջարկեց ստանալ միայն հարկ այն 25 միլիոնից, որ գտնվում է անգլիական բանկում։ Այստեղից ծագեց մի դատաստանական գործ, որ տեւում է 4 տարի։ Սկզբնական ինստանցիաներում գործը տարել է Անգլիայի պետական գանձարանը, բայց ընկերութիւնը դանգատ է տուել Լօնդոնի վճռաբեկ ատեանին, որ եւ մօտ օրերումս պէտք է կայացնէ իր վճիռը։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

28 Նոյեմբերի

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողովի Ուէստոնի լրացուցիչ յաւելվածը գահական ճառի պատասխանին Զինաստանի վերաբերմամբ յետ է առնված։ Վիճաբանութիւնների ժամանակ Լլոյդ Ջորջ առաջարկում է մի յաւելված, որով յայտնում է, թէ մինիստրները ոչ անմիջական եւ ոչ կողմնակի շահեր չը պիտի ունենան այն ֆիրմաների մէջ, որոնք աշխատում են կապալներ վերցնել կառավարութիւնից։ Առաջարկութեան հեղինակը եւ միւս արժատական ճառախօսները մանրամասնօրէն քննադատում են Չեմբերլէնի եւ նրա ազգականների կապերը այն ընկերութիւնների հետ, որոնք կառավարութիւնից պատուէրներ են ստանում. այսու ամենայնիւ նրանք պնդում են, թէ չեն մեղադրում մինիստրին անձնական կաշառակերութեան մէջ։ Չեմբերլէն վեր է կենում սաստիկ յուզված եւ յայտնում է, թէ հարցը նրա անձնական պատի մասին է. նրա դէմ զրպարտութիւններ տարածելու համար դատադրութիւն է կազմված եւ դատադրութիւնը տարվում է այնպէս, որ նա չէ կարող դատ բաց անել, բայց նրա ազգականները, որոնց պատիւը չոչափված է, մըտադիր են դիմել դատարանին։ Իր քաղաքական կեանքի ամբողջ ընթացքում նա երբէք գործ չէ դրել իր ազդեցութիւնը եւ երբէք չէ աշխատել անկանոն ճանապարհով դրամական միջոցներ ձեռք բերել իր եւ իր եղբօր համար։ (Հաւանութեան բարձրաձայն աղաղակներ)։ Ճառախօսը մանրամասնաբար բացատրում է, թէ ինչ մասնակցութիւն է ունեցել այդ ընկերութիւններին վերաբերեալ վիճաբանութիւնների մէջ եւ աւելացնում է, թէ աշխատելով վիրաւորել նրան՝ հակառակորդները ոչնչացնում են պարլամենտի էութիւնը. այսուամենայնիւ վիրաւորողները չը չոչափեցին ոչ նրա եւ ոչ պարլամէնտի պատիւը. (հաւանութիւն)։ Առաջին Չեմբերլէն բողոքում է, թէ իբրեւ գանձարանի լորդ նա ոչ մի յարաբերութիւն չէ ունեցել կառավարութիւնից առաջ կապալների հետ։ Կեմպբէլ Բաններման նկատում է, որ սկզբունքով նա համաձայն է Ջորջի առաջարկութեանը։ Բալֆուր կարծիք է յայտնում նրա հակառակ, որովհետեւ այդ առաջարկութիւնը ուղղված է անձնականապէս Չեմբերլէնի դէմ։ Ցաւելվածը մերժվեց։ Գահական ճառի պատասխանը ընդունվեց։

ԲԵՐԼԻՆ։ Դաշնակցական խորհուրդը միաձայն որոշեց վճռական դիրք բռնել այն առաջարկութեան դէմ, որ արել է ազգային խորհուրդը միջնորդ դատարան պահանջելու վերաբերմամբ արանավաճառական հարցում։ Նա յանձնեց դաշնակցական խորհրդի նախագահին պարզել ազգային խորհրդում նրա տեսակէտը։

ՇԱՆԳՀԱՅ։ Ժամանչժիդուն փոխարքան տեղեկացրեց բրիտանական ընդհանուր հիւպատոսին, թէ հիւսիսային Զինաստանից հեռագիր է ստացված, որի մէջ ասված է, թէ դաշնակիցները գրաւեցին վեց գաւառ Ժիլիի նահանգում, Տեանձինի հարաւակողմում, մինչեւ Շանդունի սահմանը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Զաֆֆիի գործողութիւնները, որ արտաքսեց կողոպտիչներին Պեկինում ամերիկական հսկողութեան յանձնված շրջանից եւ բողոքեց աստղաբաշխական գործիքները տանելու դէմ, կատարելապէս հաւանութիւն են գտել Վաշինգտօնի իշխանութեան կողմից։ Մի բարձրատիճան անձն յայտնեց, թէ Զաֆֆիի կողմից Վալդերզէէին ուղարկած յայտագիրը իր գլխաւոր կէտերում հաւանութիւն է գտնում Մակ-Կինլէյի կողմից։

ՊԵԿԻՆ։ Տեանձինից այստեղ հասաւ առաջին չընդհատվող գնացքը՝ «Մեծ-բուունցքի» ապըստամբութեան ծագելու օրից յետոյ։

ԼՕՆԴՕՆ։ Հաղորդում են, թէ նորագոյն տեղեկութիւններին նայելով՝ գեներալ Նոկսի եւ Դէվէսի զօրքերը դեռ եւս չարունակում են կուել։ Տեղեկութիւնները ուշ են ստացվում նրա համար, որ Նոկսի հետ հեռագրական հաղորդակցութիւն չը կայ։ Կռիւը առանց դադարելու չարունակվում է եւ կռիւի տեղը շարունակ փոփոխվում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշուով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը:		№ 3 գնացքը.	
Բաղուից դուրս է գալիս ցեր.	3 ժ. 5 ր.	գիշ.	11 ժ. 15 ր.
Թիֆլիս է հասնում առ.	8 » 23 »	եր.	5 » 35 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 3 »	եր.	6 » 30 »
Բաթում է հասնում եր.	9 » 11 »	առ.	7 » 10 »

№ 6 գնացքը:		№ 4 գնացքը.	
Բաթումից դուրս է գալիս առ.	8 ժ. 56 ր.	եր.	10 ժ. 47 ր.
Թիֆլիս է հասնում եր.	8 » 42 »	առ.	11 » 18 »
Թիֆլիսից դուրս է գալիս »	9 » 22 »	»	12 » 36 »
Բաղու է հասնում ցեր.	1 » 25 «	»	7 » — »

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	առաւ.	7 ժ. 56 ր.
Բաղու է հասնում	երեկ.	9 » — »
Բաղուից դուրս է գալիս	առաւ.	6 » 50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 » 12 »

—

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	10 ժ. —
Ալէքսանդրօպոլ հասնում է . . .	առ.	8 » 27 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 » 23 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	4 » 12 »
Ալէքսանդրօպոլ հասնում է . . .	երեկ.	7 » 40 »
Թիֆլիս հասնում է	առ.	6 » 15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Ն. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ի. Ֆ. Պրօսասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսասեվիչ—5—6 ժ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՀՐԱՒԷՐ

Ամսիս 26-ին ծխականների ժողով չը կայացաւ վանքի եկեղեցում, ուստի վերատին հրաւիրվում են նոյն եկեղեցու ծխականները դեկտեմբերի 3-ին, առաւօտեան 11 ժամին, կիրակի օրը ժողովի երէցփոխի հաշիները զննելու։ Առանձին հրաւիրատոմսեր չեն ուղարկվելու։

1—2 (հ. չ.) Ղ. ա. քհ. Խարազեանց

Դեկտեմբերի 3-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին, Էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցումը լինելու է ծխականների ժողով, քահանայրդի Երուանդ Տէր-Բարսեղեան Տէր-Բարսեղեանցին հոգեւոր կոչման մէջ ընդունելու համար հաստիօսական կազմելու, ուստի պատիւ ունիմ սրանով հրաւիրել յիշեալ եկեղեցու պ.պ. ծխերին՝ ներկայ լինել ժողովին մասնակցելու։

Գործակալ բ. ժասի Թիֆլիսի՝
1—3 Գրիգոր ա. քհ. Մանդակունի

«ԲԱԶՄԱՎԷՊԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Առ այժմ ի Թիֆլիս գործակալ չունենալով, կը խնդրենք մեր պատ. հին բաժանորդներէ, եւ անոնցմէ, որ կը փափաքին նոր բաժանորդ գրվիլ, որ հաճին դիմել ուղղակի մեր հասցէին. —Rédaction de la Revue «Bazmavep»—Venise—St.-Lazare.

Ղրկելով միանգամայն բաժանորդագինը 4 ր.։

2—3

Կուկիայի «Թանդոյեանց» ս. Աստուածածին եկեղեցու համար հարկաւոր է խումբ իր խրատապետով, քառաձայն երգեցողութեան համար։ Պայմանների համար դիմել նոյն եկեղեցու ժիրանութեան կամ երէցփոխին։

Երէցփոխ Ս. Ղամազեանց
(Ե. հ. չ.) 2—3

ԲԺՇԿՈՒՀԻ

Մ. ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐԵԱՆ-ՕՀԱՆԵԱՆ
ԲԱԳԻՐՈՎՈՒՄ

Ընդունում է հիւանդ կանանց
10—12 ժ. առաւօտեան, 5—7 ժ. երեկոյեան։
Բագիրովսկի սկվէր, տուն Բագիրովի։ Баку, Багировскій скверъ, д. Багирова. 8—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այս տարվայ դեկտեմբերի 1-ին քաղաքային Ախտահանական տան մէջ՝ ախտահանութեան համար նշանակվում է նոր սակագին, որ հաստատված է ներքին գործերի մինիստրութեան կողմից՝ համաձայնութեամբ ֆինանսների մինիստրութեան։ Ախտահանական տունը յանձն է առնում ախտահանել թէ տներ եւ թէ ամեն տեսակ իրեղէններ։ Այն տների ախտահանութիւնը, որտեղ եղել են վարակիչ հիւանդութիւններ, կատարվում է ձրի։

2—3

ԲԺՇԿԱՊԵՏ

ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։ Ընդունում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 5—7 ժ.։ Վեղիամինսկայա փողոց, տ. № 24։ (Ե. չ. չ.) 12—20

Լոյս տեսան եւ վաճառվում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1901 թ.

ԾՈՑԻ եւ ՊԱՏԻ
(Շիրակ)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարված է Ներսէս V կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Րաֆֆիի եւ Ց. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր եւ հետաքրքիր յաւելուած՝ ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երազահան ու նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէյլեր, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է Յայտնի լիտոգրաֆիացում, 15 գոյնով։ Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը աղագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի։

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ. գումարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь. Карапету Апинянъ, կամ Alexandrople Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող շտապեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրները ճշդութեամբ կատարել։ (Ե) 10—12

Գետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. և 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մունները, տապիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Մատակարարվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Գուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երևանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բաղում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

18—100

ԲՕՓՕՓԻ ՅԵԼՈՒԼԵԱՐՆԻ ՍԵՐՄ

Բաղդադի առաջնակարգ եւ սպիտակ տեսակ

Պասքէօրեան դրուբեամբ պատրաստված

հսկողութեամբ

ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ

Առաջին կարգի վկայեալ մասնագէտ Պրուսայի Կայսերական Շերամապահական վարժարանէն։

Երկար տարիներէ ի վեր Թիւրքիոյ, Կովկասու եւ Պարսկաստանի մէջ արդէն փորձուած եւ ծանօթ ֆիրմա ՄԻՀՐԱՆ ԽԱՆՃԵԱՆԻ մասնաւոր գործարանին մէջ Պասքէօրեան դրուբեամբ ընտրված Պաղատատի տեսակ սպիտակ հունտերէն յատկապէս եւ մասնաւոր խնամօք պատրաստել տուած, եւ որոնցմէ առաջին պարտիան արդէն հասած եւ յանձնած եմք Շերամապահական կայարանն քննութեան համար։

Ամեն անոնք՝ որք կը փափաքին դիւրամատչելի գիներով լաւ ապրանք գնել եւ ապահով ելլալ հունտերու տեսակին վրա, թող հաճին դիմել մանրամասնութեանց համար Մայտուրաձէ եւ Խօջափարուխով քարավանսարան № 16—17, **Ա. Կ. ԱՐՄԷՆ** եւ ընկ. գրասենեակը։

(Ե. հ. չ. 11—30

Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցում

ծախվում են հետեւեալ նոր գրքերը՝

Տէր-Աստուրեան Պ., Գեղարուեստական Ալբօմ հայ գործիչների, 32 պատկեր, Թիֆ. 3 ր.
Այվազեանց Բ., Աչոտ Երկաթ, պատմական վէպ, բ. տպագր. Թիֆ. 1900 1 ր.։
Երիցեանց Ա., Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX-րորդ դարում, երկու հատոր (սակաւաթիւ). Թիֆ. 4 ր.։
» » Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգեւոր դպրանոցի, ա. հատ. Թիֆ. 2 ր.։
» » Ներսէս Ե-րորդ աշտարակեցի կաթողիկոսի կենսագրութիւնը, 3 տետր (սակաւաթիւ) Թիֆ. 75 կ.։
» » Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ V։ Тифлисъ ц. 3 р.
Խաչատուր Աբովեանի երկերը, Վէրք Հայաստանի եւ այլն, Մոսկվա. 1 ր.
Շանթ, Դերասանուհին, վէպ, Թիֆլ. 1900 թ. 40 կ.
» Դարձ, վէպ, Թիֆլ. 40 կ.
» Վերժին, վէպ, Թիֆլ. 60 կ.
» Երազ օրեր, վէպ, Թիֆլ. 40 կ.
Շիրվանզադէ, Քաօս, վէպ, Բաղու, 1 ր. 50 կ.
» Զուր յոյսեր, վէպ, Թիֆլ. 1 ր.
» Կրակ, Բաղու, 30 կ.
Պռոշեանց Պ., Միքէլ աղնց Աբդիլը, զրոյց իրական կեանքից, Թիֆլ. 20 կ.
» Նա, պատկեր, Թիֆլ. 20 կ.
» Աքցիզչի, պատկեր, Թիֆլ. 25 կ.
Ռափայէլ Պատկանեանի Ընտիր երկասիրութիւնները, 2 հատոր, Պետեր. 4 ր.
Տէր-Աւետիքեան Ս., Ղեկավարներ, 1) Կապ բռնողը, 2) Մեր Տէրը, Թիֆլ. 40 կ.
» Նահատակը, Թիֆլ. 20 կ.
» Սամիտարնի, Թիֆլ. 20 կ.
» Իրլանդիայի դատը, Բաղու, 80 կ.
Րաֆֆի, Զահրումար, (Թիֆլիսի հայերի կեանքից), Թիֆլ. 2 ր.
» Վէպիկներ եւ պատկերներ, երկու հատոր, Թիֆլ. 4 ր.
» Վէպիկներ եւ պատկերներ, երկրորդ հատոր, Թիֆլ. 2 ր.
» Տաճկահայք, Թիֆլ. 50 կ.
» Մինը այսպէս, միւսը այնպէս, պատկերազարդ վէպ, Թիֆլիսի վաճառականների կեանքից, Թիֆլ. 1 ր.
» Կայէնի կտակը, Թիֆլ. 1 ր. 20 կ.
Փառնակէս, Նիսիա, վոլրվիլ մէկ արարուածով, Երեւան, 1900 թ. 40 կ.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Հ.) 2—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւադնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 6/19 դեկտեմբերի—շոգենաւ՝ ՍԻՐԿԱՍՍԻ, կապիտան ԳԱՐՐԻԿ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայտուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մուրթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. հ. չ.) 2—20

„НИВА“

Подписчики „НИВЫ“ получатъ въ 1901 г.:

52 №№ журнала **„НИВА“** (до 1500 столбцовъ текста и 500 гравюръ), въ которыхъ между прочимъ, появятся: 1) еще нигдѣ не напечатанныя посмертныя произведенія

Д. В. ГРИГОРОВИЧА: **„Очерки Венеціи“** и **„Изъ записной книжки“** (характеристики выдающихся современ. русскихъ дѣятелей и анекдоты изъ ихъ жизни); 2) рядъ статей со множествомъ рисунковъ, картъ и проч, подъ заглавіемъ

„XIX ВѢКЪ“. Статьи эти дадутъ читателю **полную картину жизни истекающаго столѣтія и составятъ роскошный томъ.**

24 ТОМА **„Сборника Нивы“** содержащаго **ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ Г. П. ДАНИЛЕВСКАГО** („Черный годъ“, „Сожженная Москва“, „Княжна Тараканова“, „Мировичъ“, „Бѣглые въ Новороссіи“, „Боля“, „Новыя мѣста“, „Девятый валъ“ и всѣ друг. многочисленныя его произведенія), которое будетъ приложено въ теченіе **ОДНОГО 1901 ГОДА,**—такъ что „Сборникъ Нивы“ 1901 г., по количеству матеріала для чтенія, значительно превозойдетъ „Сборники“ всѣхъ прежнихъ лѣтъ.

Даетъ въ теченіе **одного 1901 года** *своимъ подписчикамъ* **БЕЗПЛАТНО** *(стоящее въ отдѣльной продажѣ 15 руб.)*

ПОДПИСНАЯ ЦѢНА „НИВЫ“

На годъ со всѣми приложеніями:

Безъ доставки въ СПБ. . . . **5 р. 50 к.**

Съ доставкою въ СПБ. . . . **6 р. 50 к.**

Съ перес. во всѣ города и мѣстн. Россіи. **7 р.**

За границу – 10 р.

Разсрочка платежа въ 2 и 3 срока.

Полное собраніе сочиненій

Г. П. ДАНИЛЕВСКАГО

СЪ ПОРТРЕТОМЪ, ФАКСИМИЛЕ и БІОГРАФИЧ. ОЧЕРКОМЪ.

12 КНИГЪ **„ЕЖЕМѢСЯЧНЫХЪ ЛИТЕРАТ. ПРИЛОЖЕНІЙ“** (романы, повѣсти, разсказы, популярно научныя статьи, очерки и проч. современныхъ авторовъ).

12 №№ **„Парижскихъ модъ“** (до 300 модныхъ гравюръ по послѣднимъ фасонамъ лучшихъ матеріаловъ).

12 №№ рукодѣльныхъ и выпильныхъ работъ и выкроекъ въ натуральную величину (около 600 рисунк. и чертеж.).

Стѣнной календарь на 1900 г., печатан. красками.

Подробное иллюстрированное объявленіе высылается безплатно.

Требованія адресовать въ Главную Контору журн. „НИВА“, С.-Петербургъ, Малая Морская, 22.

М. 73057.

1—1

Дозволено цензурою Тифлисъ 30 Ноября 1900 г. Типографія Грузинск. Т—ва. Большая-Ванкская ул., № 27.